Հովհաննես Թումանյան

Տարոնի առավոտը

Կարմիր արևն առավոտյան
Պայծառ ցոլաց դեպի Մուշ,
Ծավալվեցավ ծովի նման
Մշու դաշտը քաղցրահուշ:

Նրա շուրջը խոշոր դեմքով
Կանգնած, լեռներն ահագին,
Քնաթաթախ, լուռ աղոթքով,
Նայում են վեր երկնքին:

Արածանին օձապտույտ

Ծաղկադալար ափերում,
Մշուշի մեջ, ազատ, անփույթ
Խաղ է անում, փրփըրում:

Բայց հարսներ չեն հավերժական
Խայտաճամուկ շորերով,

Եվ չեն եկել, որ լողանան
Արածանու ջրերով:

Որ սիզավետ տափաստանում
Վազվզելով մանրաքայլ,
Երգ ասելով քաղ են անում

Մարգերի մեջ ցողափայլ:

Արեգակի շողերի հետ
Ահա շողաց և մի բան,–
«Ո՞վ զորավոր սուրբ Կարապետ,
Ո՞վ ավազանդ հայության...»

Հանգիստ կացի՛ր, բարեպաշտ մարդ,
Այն խաչը չէ քո պաշտելի
Սուրբ Կարապետ շքեղազարդ
Հայոց վանքի գմբեթի:

Ծայրն է քրդի սուր նիզակի,

Որ ճոճում է մշուշում.
Ահա և ձին ավազակի,
Ի՞նչ արագ է նա քըշում:

Տեսավ հեռվից քաջ աշիրը
Զվարթ խումբը քաղվորի,

Եվ ցոլացին սուր աչքերը
Ցանկությունից վայրենի.

Եվ սլացավ ինչպես բազեն
Խոյանում է ամպերից,
Ա՜հ, խեղճ կանայք, էլ ո՞ւր վազեն,

Ի՞նչ է գալիս ձեռքներից...

Հասավ, ճանկեց... բռնեց թարքին
Օրիորդին ուշաբարձ,
Ասպանդակեց, տաքացավ ձին,
Եվ հեռացավ սրընթաց:

1890